ԱՂՈԹՔՆԵՐ

Ժողովրդական աղոթքները բաժանվում են երկու տեսակի՝ սովորական աղոթքներ և հիվանդ բժշկելու աղոթքներ։

Սովորական աղոթքներով ամեն մի հավատացյալ դիմում է աստծուն և կամ մի որևէ սուրբի, աղաչում օգնել իրեն՝ դժվարին րոպեներին տալ հաշողություն իր գործունեության մեջ։ Այս տեսակի աղոթքները շատ էին տարածված, որովհետև ամեն մի մայր, ամեն մի տատ, բացի պարտադիր «Հայր մեր» աղոթքից միշտ սովորեցնում էր երեխաներին բերանացի ասել այդ աղոթքները անկողին մըտնելիս և առավոտյան տեղից բարձրանալիս։ Այս աղոթքները շատ տարածված էին։ Հիվանդ բժշկելու աղոթքները որոշ պառավների մենաշնորհն էր և քիչ հայտնի էին ժողովրդի լայն խավերին։ Որոշ պառավներ ժառանգաբար սովորելով իրենց մայրերից, որպես մասնագետ արհեստավորներ, զբաղվում էին բուժիչ աղոթքներ ասելով։ Հիվանդների ազգականները հրավիրում էին այդ պառավներին, նստեցնում հիվանդի անկողնու մոտ, որպեսզի նա աղոթե։ Պառավները հանում էին դըրպաններից մի որևէ առարկա, գլխավորապես օձի գլուխ և կամացուկ աղոթում, քշում հիվանդի վրայից նրա ցավը։ Իրենց աշխատանքի համար նրանք ստանում էին վարձ՝ փող կամ մթերք։ Այդ պառավները հաճախ «թեթև թափում էին»։ «Թեթև թափում էին» զանազան կերպ, գլխավոր դերը խաղում էին սոխը և կամ հալեցրած արճիճը։ Ավելի հմուտները կրակի վրա դնելով սաճը (բով) հալեցնում էին արճիճը և պարպում տան վրա։ Արճիճը սառելով, ստանում է որոշ ձև և այդ ձևերի վրա նայելով, որոշում էին հիվանդության էությունը, նրա որչափ վտանգավոր լինելը և այլն։

Այդ պառավները իրենց աղոթքները ոչ ոքի չէին սովորեցնում, ասում էին, որ այդ դեպքում աղոթքը կորցնում է իր բուժիչ հատկությունը։

1.

Աստվածամար,
Գամքդ գագար,
Ձարը խափանե,
Պարին գադարե։

2.

Սուրփ Սարդիս, տուն հասնիս,
Գիշեր ասի, տուս էլլա,
Մեկ զորավոր սուրփ դեսա,
Ասի, լացի, ոդն ինգա.
Ասի.—Հայր սուրփ, անունդ ի՞նչ է։
— Իմ անունս սուրփ Սարդիս,
Օրթուս անունը սուրփ Մարդիրոս,
Ծիս գըքալե ամրի վրան,
Անդադար ձովի՝ վրան։
Կնա, ասա, կերիներուն։
Ազատ անե իր արևուն։

3.

Լուսացավ, լուսն է պարին,
Ես հավատամ դերն գենթանի
Էրգինքը պածրա է Սիմոնին,
Մարիամ նստի սուրփ սեղանին
Լուսաթաթախ խաչն երեսին,
Աստծո պանն էր պերանին.
Վով որ ասե իրեք պերան,
Մեղքը չըհիշվի տադարանին։

4.

Համփարցում պածրա բադի
Օսկի գամար, օսկի կոդի,
Տուռդ գայնի Քրիստոսի
Ջիգոգը մեգ արզաթ-օսկի
Վով որ հինգ օր բասրդ պռնե,
Մեղքը չըհիշվի տադարանին։

5.

ԱՂՈԹՔ ԳԻՇԵՐԸ ՊԱՌԿԵԼՈՒ ԱՏԵՆ

Աստված աստված է,
Աստված ջշմարիտ է,
Ահա մդա կերեղման,
Հոքիս քեզ էմանեթ։

6.

ՏՂՈՑԿԱՆԻ ԱՂՈԹՔ

Մեգ ձառ մը գա անդեղը,
Անձառը պուն ունի անդեղը.
Սև օցն էլլավ գանչելեն, շընչելեն,
Շունը գանչելեն,
Գազուն մլավելեն.
Մանուգն էր, մորին գերթար։
Քրիստոս ասաց.—Ու՞ր դերթաս.
— Գին է, գզոցդանին կերթամ,
— Ջարքս տառնաս, դարակ ըլաս։

7.

Հիսուս-քրիստոս սուրփ Ջերոնի,
Վերնագունին, բագարաքին,
Ան թշնամին գունը առավ,
Գույս Մարիամը ծանը լսից,
Վաղից, չուվանը ոտքը ծգից,
Անօրինաց մահ հանից,
Սիրգը, փորը փորցանից,
Աչքը-էրեսը գուր անիս,
Փենջերեյին էգողը—քար գդռի։

8.

Սուրփ Օվանես, լեռեն կուկաս,
Սաղմոսը քաղելեն կուկաս։
Սաղմոսը արից քարին վրան,
Վեր նայեցավ, նշան դեսավ,
Վար նայեցավ, սասանեցավ.
Նշանը նստի քուֆթ կպանի,
Ալ ու գանանչ չիբիլգիքով.
Էս թաղեցեք փադե նաշով.
Փադը փտրտած փտտեցունե.
Էս թաղեցեք փադե նաշով.
Օսկին հալման հալեցունե։
Հայ, հոռոմ գըսգըձացին,
Ոտքի դագեն ջուր չանցնի։
Մարիամ Մաղթանի՝
— Ինչու՞ մենագ բառգիլ իս,
— Ես մենակ չիմ,
Քրիստոս կլխուս դագը,
Դասներգու առաքյալ չորս քովս,
Անուն Հիսուս-Քրիստոսի։

9.

ԱՍՏՎԱԶԱՄԱ՛Ր

Աստվածամար գույս իս,
Մեղավորաց հույս իս,
Անդադար պարեխոսիս,
Հոքիս քեզի գնքահար,
Սուրփ մեռոնով սրփե զիս,
Ամենայն չարե, բելայե փրգե զիս։

10.

Աս գունը դերունի է,
Դաշարը Սողոմոնի է,
Ծին տուռը գաբ է,
Բողոս-Բեդրոս էրթիգն է,
Փիլոնը էրթիգին ձաձուգն է,
Կավազանը տուռերուս կոցն է,
Խաչ-ավեդարան կլուխներուս դագն է,
Անուն Հիսուսի-Քրիստոսի։

11.

(Տարբերակ)

Քրիստոս մեր դունն է,
Աթոռն Սողոմոնի է,
Բողոս-Բեդրոս տուռս է,
Սահագ, Ագոփ երթիկս է,
Փիլոնը երթիկիս ձաձուգ է,
Խաչը, կավազանը տուռիս կոցն է,
Տուռըս էգողը քար գըդռի,
Երթիկիս եգողը եդ տառնա։

12.

ՀԻՎԱՆԴ ԲԺՇԿԵԼՈՒ ԱՂՈԹՔՆԵՐ

Ջար նազարի աղոթքներ

Քրիստոս մեր գունը էգավ,
Խարիբգիթին դունը մդավ,
Էրիգը պարի, գնիգը չար,
Թութու մաձուն, կարիի հաց։
Քրիստոս-դեր էգավ, դեսավ, մեղքցավ։
Գդռե չար աչք,
Գդռե չար նազար երեխային։
Ջար նազար սև նաշով թաղինք,
Մեր Մինասին առոխչութին բերինք։

13.

Խոռ պնագ, խոռ տկալ։
Թութու մածուն, թանաբուր.
Սառը մսուրք նստիլ իմ,
Գուդիմ, գըխմիմ,

Պայց ղավագս սիրդես տուս չի կալ.
Չար աչքը երեխայիս ձոցիցս հանից,
Չար աչքը՝ չար փուշ,
Չար փուշը աչքը փաթլամիշ անե,
Չավագս ազատե
Գդռե չար աչք,
Գդռե չար նաղար։

14.

Աղոթիմ, գաթն է դուսին,
Կավազանն է Մովսեսին,
Քնարը Դավթին,
Մադն է Սողոմոնին,
Ծեռն է Հիսուս-Քրիստոսին,
Էլեոնին, Ձերոնին.
Առեք էրգու պերան տանագը,
Գդրնք չար աչքը, չար փուշը,
Չար խոդուկը, չար նաղարը
(Այս ինչ անուն) ձառային։

15.

ՉԱՐ ՆԱՁԱՐԻ ԱՂՈԹՔ ՏՂՈՑԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Դուն ունիմ էրգաթե,
Բադերը ամենը գբղաք է,
Սուրբ գույսը մեշը քուն է,
Սուրի Գրիգորը ղարթուն է։
Երեք-երեք բոյ ձիավոր,
Երեքն ալ դանանչ դաբավոր,
Մեգը՝ Հիսուս, մեգը՝ Քրիստոս,
Մեգը մեր դերը։
Ելանք բարձր սարերով,
Իջանք խոր-խոր ձորերով,
Հարուր հաղար հրեշտակով.
Առչի դեր, ու՞ր կերթաս.
— Երթանք տուռը հիվանդին,
Էլլիմ երթիկը դղոցգանին,
Պալիք ծփիմ վիրաբաշտին։
Սուրբ ունիմ, սուրբ կոդի ունիմ,
Սուրբ կոդի գաբաձ ունիմ,
Բողոս, Բեդրոս, Անթիանոս,
Կերեզմանին դերն Հիսուս,
Հայր Հովսեփ, գույս Մարիամ
Քուն էղավ դեսավ,
Բերթի քաղաք ընձայեցավ,
Ի խանձարուրս բաղեցավ։

16.

Աղոթիմ ութը մագով,
Աստվաձամոր քաղցր գաթով
Գողմային, Դամիանոսին,
Անարզաթ բժշկին բըժշկարանով։
Սև օցը գըթեցին,
Առանց մագարթ մագարթեցին.
Մարը գերավ՝ շաթեցավ,
Դուստրը գերավ՝ բաղռեցավ։

17.

Ով Մարիամ, ի՞նչ գանիս,
— Հիվանդ իմ ու ջար չունիմ։
— Առ՝ սևագոթ տանագը,
Մդիր Ագամա դրախտը,
Գդռե, իմ սիրելի Ալեքսան,
Չար աչքը, չար փուշը, չար խոդուգը։

18.

Քրիստոս մեր տուռը տեմ առավ,
Քարը պարծ արավ,
Հողը դոշակ արավ,
Թութու մածուն, կարիի հաց,
Խոռ գդալ, խոռ պընագ
Մեչը բրդած հաց։
Այն օղորմելի էրգանը,
Օղորմելի գընգանը,
Առ թոնդրեն ձաղեկը,
Գդռե մեր Ագոփին
Չար աչքը, չար փուշը,
Չար գրոնան։

19.

ԴԵՐՄՈՒԿԻ ԱՂՈԹՔ

Բուժուժը պուն շինից,
Մըուշունին հեգ օցը սաբան վարից.
Քրիստոս դերը էգավ, դեսավ,
Իրեք հեղ թուքից, չորցավ։

20.

ԵՐԵԽԱՅԻ ՊՈՐՏԸ ԲԺՇԿԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Մսագը գըդռի երեխային
Ութը մագով, ութը բութով,
Աստվաձամոր քաղցր գաթով,
Գդռեցի, ծկեցի օխտը խաթ ձովի դագը
Հալեցավ, մաշեցավ,
Աստվաձամոր կիրգը ինգավ։

21.

ՕՁԻԿԻ ԱՂՈԹՔ

Սև օցը մգիլ է հիվանդին ձոցը,
Սոխախը բոյը համարցակ գեշթա։

Սև օցը վիզը փութթվիլ է,
Սև օցը սրդին վրան բառկիլ է.
բժշկաբեգ սուրբի Գարաբեդ
Գդռից սուրով օցին կլուխը,
Սև օցին՝ սև անեծք։
Սև լեշին՝ սև հող,
Հիվանդին՝ առոխչութին։

22.

ԱՉՔԻ ՑԱՎԻ ԱՂՈԹՔ

Էլա, կնացի Մոսես սարը,
Հոն մեծ գոլ դա,
Գոլին մեչը մեգ հագ կեղ գա,
Կեղին մեչը մեծ ձառ գա,
Ձառին վրան պունա գա,
Պունային մեչը մեգ հադ ձու գա,
Անոր մեչն ալ մար օց գա,
Օցն ալ բալաներ ունի,
Օցն ալ մաղ ունի։
Առի սուր տանադը,
Խոթեցի օցին պերանը,
Ճաշտեցի խաֆան.
Աչքին լուսը խլեցի,
Օհանիս լուս պերի։

23.

ԳԱՑԼԻ ՊԵՐԱՆԸ ԿԱՊԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Աստվածամար, ինքդ արա,
Լեզուն, պերանը բութ արա,
Ծեռքը, ոտքը գով արա,
Թաթը ետևը, գրունգը առչև։

24.

ԿՈՐՈՒՍՏ ՓՆՏՐԵԼՈՒ ԱՂՈԹՔ

Սադանա՛, սաղանա՛,
Մեգ աման մը փախլավա,
Շադը քեզի,
Քիչը ինձի,
Գորուստիս դեղը ասա ինձի։

Այս աղոթքները անշուշտ շատ հին ծագում ունեն, նրանց մեծ մասը գալիս է մայր Հայաստանից։ Դարեր շարունակ թափառելով գաղթականության հետ, նրանք ենթարկվել են ոճական փոփոխությունների և դարձել շատ դեպքերում անհասկանալի և անիմաստ։ Կան և գաղթականության մեջ հորինված աղոթքներ։ № 8 տակ զետեղված աղոթքի «Հայ ու հոռոմ կըսկծացին» խոսքերը պարզ ապացույց են նրա Ղրիմում հորինված լինելուն։